

մարեցիներ նոր ի նորոյ նորա վերայ խօսել, այլ միայն հարկաւոր է ասել, որ եթէ դոյ Աստուած ուրեմն դոյ նաև նորանից յարդոյն տուած օրէնքներ և պատգամներ, որք չեն թողում մարդոյն ազատ դործել միայն խղճի և համոզմանց համաձայն այլ իրրև սանձ ձգում քարշուրմէն նորան դէպի այն տեղ, ուր է Աստուծոյ կամքը և երջանկոյ թիւնը, Աստ թէ աւելի լաւ ստանա ի՞նչ օգուտ է մարդոյն որ ասումէ — ես չեմ փոխում ազգութիւնս այլ դարերով ինձ նախնիքներից աւանգած կրօնս և սովորութիւններս՝ անուանելով ինձ կաթօղիկ, բողոքական և ընչ, Եթէ դու ճանաչուածս այն Աստուածը, որին ճանաչումէ հայրս եթէ պաշտուածս Յիսուսին, որին պաշտումէ հայրս եթէ աղօթումս սուրբ Հոգւոյն, որին աղօթումէ հայրս եթէ հաւատումս աւետարանին, սուրբ գրքին, իրրև Աստուծոյ պատգամաց գիրքը, որին և հաւատումէ հայրս ազա ուրեմն այս ամենից յետոյ ի՞նչ թէ կրօնը փոխելով մեռումս ազգութեան մէջ, այլ ազգութիւնը փոխելով մեռումս մի և նոյն կրօնի մէջ, ինչպէս մարդկայն թիւններից կարող են ասալ զալ նաև շատ զաղափարական, կարծիքական և կրեակայական հարցեր, որինակ կարողներ տաւարկել նաև այս մի հարցս, Ի՞նչ հարկաւոր են այսքան լեզուներ, այսքան ազգութիւններ և կրօններ, աւելի լաւ է լինել մի կրօն, մի լեզու և մի ազգ մարդկութեան անուամբ, Բայց ցաւալին այս է, որ այսպիսի դատողութիւններ աւաջորկողները չեն մտածում, որ շատ առաջ պղպէս էր, բայց այն մի Աստուածը, որին ընդունում են ամենայն ազգ և լեզու, նա կոմեցաւ մարդկային ամբարտաւանութեան խորհուրդները ցրել, նա կամեցաւ որ լինի այսպէս, Ապա ուրեմն ամենից լաւը նա է, որ չլիմաղրեն Աստուծոյ կամքին, այլ մնան հաստատուծ այն կոյման մէջ, որի մէջ կոչուած են, վասն զի մենք ով ենք, որ կարողանաք դէմ դնել Աստուծոյ կամքին, Մենք հայ ենք և բրիտոնեայ, պարտականեմք պահպանել մեր լեզուն, կրօնը և ազգութիւնը, և ինչպէս մեր նախնիք մեզ են աւանդել, այնպէս էլ պէտքէ ամբողջութեամբ մենք աւանդենք մեր յաջորդներին:

Վ. Ա. Զ. Ն. Բ. Ա. Զ. Ն. Ս. Շ. Ա. Ը. Ո. Ն. Ե. Ա. Ն. Յ.

Ը. 1-րդ.

Մոսկուայի Հայոց Գասպարեան աղքատանոցի խորհրդարանի վեհափառ Հայրապետին մատուցած յայտարարութիւնից եւ անցեալ 1879 թուականի հաշւէկշռից հետեւեալ տեղեկութիւնները քաղուածօրէն հրատարակել արժան կհամարիմք ի գիտութիւն մեր սիրելի ազգայնոց:

Առ 1 յունվարի 1879 ամի ընդ խնամաաարութեամբ Աղքատանոցի գտանէին հետեւեալ 10 ձերացեալք անձինք — Քուչմախան, Խուրիկեան, Նաղարեան, Սահարեան, Աուկաջանեան, Փիքատեան ընդ որդովք, օրիորդն Խերատինեանց, Աամեա Ըլիլի և Մոսքիլեան, յորոց վերջինն մեռաւ ի յու-

նիս ամսօջ և ի տեղի նորա ընկալեալ եղև յաղքատանոցն ի վաղուց ան-
տի վերաքնակող ի Մոսկուս ի Տիւանդագին և յամենակարօտ զրուսեան
Տիբիսիցի ծերուկ Գարրիէլն Գարրիէլեան, բայց յայսմանէ ի նախկին սե-
նեկի Տօնեանց տիրացուի զեռեղեալ իղև ուսանողն մանկարարձուսեան
Տիբիսիցի օրիորդ Եւփիմիս Վարաաեան ի պատճառս աղքատութեան,
և յայլէս առ 1 յունվարի 1880 ամի ընդ խնամատարութեամբ աղքատանո-
ցին էին 11 անձինք: Ի վերադրելոց անձանց պատարունք — Բուշմալեան,
Փիրուսեան, Առաքելեան, Խուրիկեան, ՍաՀարեան, Նազարեան և զառա-
մեալն Լամիս Շփիլի ստացեալ են զլիւրի թօշակ, Կուկուջանեան և օ-
րիորդը — Փիրաաեան, Խերոզինեան և Մուրաաեան միմիայն սենեակ, և
վառելիփայտ, և ի տանի Սրբոյ Յարութեան բաժանեալ եղև Հաւասարա-
պէս ամենեցուն դակոցն յաղքատանոցին թէյ և շաքար 53 ռ. 96 կպ,
Նոյնպէս յամաքային չորս ամիսս նոյն ամի բնակեցաւ յաղքատանոցին
տաճկահայատակ Յակովբն Բալոյիան, որ չունէր բնաւ միջոց ապրուստի
և առաքեցաւ ի Հայրենիս իւր արուվք ժողովելովք յանպանց Աղքատա-
նացին և ի Հասարակութենէ:

Բ. Արտաքոյ աղքատանոցի ուսանող օրիորդացն — Սահարբէկեանի
Ալամիանեանի, Բարանեանի, Սերերակեանի և որք Եւփիմեայ Մահանա-
ջեանց տաւեալ եղև առաջնոցն 20ական ռ. և յետնոցն 10ական ռ. ի բա-
բանելուր ամսօջ վերջնոցն ի մնայիս ամսոյ սկսեալ:

Գ. Բիանուագ ցօցեալ եղև օժանդակութիւն յընթացս 1879 ամի Հըն-
գեցունց անձանց — Նօրակ Բահանային և ուսանող Նուսուֆարեանին
տասնական բուրջիս, կնօջ ասաիճանաւոր Աննայի Ալամիանեանց և այ-
րուոյն Չերբէզեանի քսանհնգական բուրջիս և այրուոյն Վարաաեանի
450 բուրջիս:

Իսկ բոլորից որոց իօրհրգարանն եցոյց զիւրն օժանդակութիւն բնա-
կարանաւ և ապրուստիս յաղքատանոցին և արտաքոյ նորին, էին 23 ան-
ձինք կարօտք օղնականութեան:

Հ Ա Շ Ո Ւ Ե Կ Շ Ի Ռ .

Առ 1 յունվարի 1879 ամի մնայր ի դրամորկեղ աղքատանոցի	Բոքր.	Կ.	Բոքր.	Կ.	Բոքր.	Կ.
Տոկոսաւոր տուք	56007	75				
Առ Էռնս օգտորանոյի	779	50	56787	25		
Չէքացս 1879 ամի եղեալ են մուտք.						
Ի շահաբերութենէ 22.607 ռ. 75 կ. դրամագլխոյ						
Աղքատանոցի						
Ի տոկոսաւոր Ա% տուսից 33.6000 ռ.	977					
Ի Հանդանակութենէ յեկեղեցւոյ յառուր ծննդեան եւ յարութեան Գրիտոսի ընդ ձեռն երեցիփոխան Պ.	1344		2321			
Փանանոցի	268	51	268	51		
Վարձ սենեկի աղքատանոցի	57			57		

Նախաբերութիւն Անգամաց խորհրդարանի և սոճիկ քարտուղարի վասն 1873 եւ 79 ամաց	240		
յաւազք Անգամայ խորհրդարանի վասն լրագրոց	9		
Ի պ. Դարկապետէ	10	259	
Մի սոկոսաբեր տան երրորդ Արեւելեան փոխարինութեան դնեալ միջոցաւ Աշխատանցի	1000	1000	
Երկու սոկոսաբեր տամբ Արեւելայի քաղաքային հասարակութեան դրամատան, թողեալ յօդուս Աղքատանցի յարկոց Աւարելեանէ, որ խնամարկիւր ընդ հովանեաւ նորին, իւրաքանչիւր տանն 100 Բարձ	200	200	
Տարեկան մուտք		4105 51	
Ընդ մնացորդովը			60892 76

Յընթացս 1879 ամի եղեալ են ծախք Աղքատանցի.

Վասն վառելիաց, կարկատանի, ապահովելոյ զտուն աղքատանցի և հրդեհէ եւ մարբելոյ զծխնելոյզս եւ զարտաքնոցս	580 79		
Վասն կերակրոց եւ ճրագի խնամարկելոց	651 90		
Վասն դեղոց նոցա	9		
Վասն թէյի, շաքարի եւ սրճոյ	53 96		
Վասն նորոգելոյ զանցաթուղթս նոցին	7 53		
Վասն լրագրոյ յընթերցումն նոցին	9		
Սոճիկ քարտուղ. խորհրդ. եւ վասն մատենի եւ դիւանական ծախսոց եւ այլ պատկանելեաց խորհրդարանի	138 60		
Սոճիկ ծառայից	230 90		
Վասն բերելոյ զԼուր յաղքատանցն, կարկատելոյ զԸրհորն եւ թղթելոյ զփերքնատուեն աղքատանցին	85 50		
Մանր ծախք.	9 30	1726 48	

Արտաքոյ Աղքատանցի եզեալ են օժանդակութեանք.

Աւրեաց Սերերբակեանի, Եղիաբէթ Աւամիանեանցի եւ Բաբանեանցի	480		
Գիմնագիծուական ուսանող օրիորդաց—Սերերբակեանի եւ Մահանաջեանի	200		
Միանուագ օժանդակութիւնը—նորակ քահանային, ուսանող հոգևորականին, կնոջ Աստիճ. Անայի Աւամիանեանց եւ պրիստի—Մուրաաեանի եւ Չերքէզեանի	120	800	

Ծախք փոխարկականք.

Վճարեալ եղև և դրատներկի Չամբարովի և զին սոկոսաբեր տանի Արեւելեան փոխարինութեան 1000 Բ. 9 1/2 առ հարկերն	905	905	
Առ I Բնակարի 1880 ամի մնաց և դրամարկեղն		3431 48	
Աղքատանցի սոկոսաբեր թղթովք	57207 75	57207 75	
Որք են 4%	49900		
5%	6500		
6%	500		
Եւ 2 տամբ Ա. եւ Բ. ներ. փոխարկանութեան	307 75		
	57207 75		
Եւ առ ճեռն պատրաստի առանձին հաշուով % և դրամագլխով 33600 Բ.	253 53	253 53	57461 28

Գ.) Առաջարկելի հաշիւն և միասին ընդ առ ձեռն սոկոսաբեր թղթովք և փոխարկական և հաշուեմատենին և պատշաճաւ որ վկայագրովք և վե-

րա հիման 10 § կանոնաց վան կառավարելոյ զտունն աղքատանցին առաջարկեալ եղև վասն վերագննութեան Հայ Հասարակութեան Սոսկուայի ի ժողով ընդհանուր ի 23 անցեալ Մարտ ամսոյ որ յետ վերադննութեան ի ձեռն ընտրեալ ի միջոյ ի բնանց երկց անձանց և բազդատելոյ զվկայապիս ընդ հաշուց եզիս զհաշիւան ուղիղ և համաձայն ընդ վկայագրոցն, իսկ գրամագրուին Աղքատանցի առ ձեռն պատրաստ զորմէ կազմեալ եղև ի 23 նոյն ամսոյ սահմանագրութիւն ընդհանուր ժողովոյն ստորագրեալ յամենայն Անդամոց Հասարակութեան անդ ներկայ եղելոց և

Ե.) Կրկին ընտրեցաւ ի ժողովոյ վասն վարելոյ զպաշտօն Անդամոյ խորհրդարանի տոհմական քաղաքի Պ. Ջանուսեանն, զորմէ կազմեցաւ արձանագրութիւն ի 23 Մարտի,

Պ Ա Ր Տ Է Ջ

Մի պարտեղ կար ընդարձակ, հողք բերրի, ջուրն առատ, Թէ երկնքի անուշ ցոյղ, Թէ արեւու լոյս զուարթ, Թէ բիր տեսակ երգեցիկ թռչունների դայլայիկ, Բաշխումէին նորան կեանք միշտ ուրախ, միշտ երջանիկ, Հազար ու մի պողատու և տիտանի ծառերով, Գրախտի պէս զարդարուած, պատած ամուր պարսպով, Այցելունքն անպակաս միշտ երանի կայսին, Նորա տիրոջ, որ այնպէս պարտեղ ուներ թանկագին, Անցան տարեք ու զարեր, տկարացաւ սորա տեր, Պակասեցան սրտացաւ և հարազատ մշակներ, Նորա ազա՛հ այցելութ և նախանձոտ դրացիներ, Կործանեցին, քանդեցին նորա պարիսպ ու դռներ, Այն պողատու ծառերի կանաչ, դալար ոստիկներ, Գարձան այլոց պարտեղում բազմաբեղուն պատուաստներ, Նորա առատ ջրերի ընթացքները փոխվեցան, Օտար պարտեղ և այգի տուղանել սկսան, Իսկ երգեցիկ թռչունները, չգանելով նորանում, Հանգչելու տեղ, չուցին հետու տեղեր շինել ընդն, Այսպէս ահա՛, մեծաշուք և վայելուչն այն դրախտ Ազա՛հութիւն և նախանձ զարձուցին չոր, անապատ, Ես չկամիմ բացաղբել, դուք հասկացէք, ով հայեր, Թէ ի՞նչն է այս դրախտանման պարտեղը, և թէ ո՞վքեր, Սորա ազա՛հ, նախանձոտ այցելութն ու դրացիներ, Եւ գործեցէք այն՝ ինչ որ պահանջու մեն Ձեր շահեր, Ս. Վ.